ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 27 » հոկտեմբերի 2023 թվականի N: 422 -Ա ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՑԱՂԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 225-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդականներ Հարություն Նալբանդյանի և Լիլիթ Մուրադյանի 2023 թվականի հոկտեմբերի 2-ի զեկուցագիրը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշումը, անհիմն համարելով «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անի Նազարյանի 2023 թվականի հոկտեմբերի 18-ի գրավոր բացատրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մեկ սրահը Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ վարձակալության իրավունքով տրամադրելու համար «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անի Նազարյանին հայտարարել նկատողություն:
2. 6-օրյա ժամկետում հետ վերցնել անհատ ձեռնարկատեր Արթուր Մովսիսյանին օգտագործման նպատակով հատկացված տարածքը և մինչև 2023 թվականի

նոյեմբերի 7-ը գրավոր զեկուցել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է